ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև

Առանձնակի կարևորելով Հայոց պետականության հետագա զարգացման և ամրապնդման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անուրանալի դերակատարումն ու նշանակությունը,

նկատի ունենալով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ և առանձնահատուկ դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում և արդի հայ հասարակության կյանքում,

առաջնորդվելով մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով և նորմերով,

նպատակ հետապնդելով առավել պարզորոշել Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունների բնույթը և բովանդակությունը,

մի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հանձին Հայաստանի Հանրապետության վարչապետի գլխավոր խորհրդական, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Շ. Կարամանուկյանի և Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լ. Մկրտչյանի և մյուս կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հանձին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի և Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տեր Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի (այսուհետ՝ կողմեր) ստորագրեցին մտադրությունների սույն հուշագիրը.

1. Կողմերն անհրաժեշտ են համարում Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև կնքվելիք համաձայնագրի նախագծի նախապատրաստման նպատակով համատեղ աշխատանքներ ծավալել հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործում և զարգացում,

բ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իբրև իրավաբանական անձի սեփականության (հող, անշարժ և շարժական գույք, պատմամշակութային հուշարձաններ և այլն) հետ կապված հիմնահարցերի հստակեցում,

գ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և նրա ավանդական կազմակերպությունների համար որոշակի հարկային արտոնությունների սահմանում,

դ) միջազգայնորեն ընդունված արարողակարգային չափանիշներին և հայ ժողովրդի ազգային սովորույթներին ու ավանդույթներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգին համապատասխան Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորների մասնակցությամբ անցկացվող պետական արարողակարգային միջոցառումների իրականացման կարգի մշակում,

ե) ազգային կրթամշակութային, սոցիալական ապահովության, առողջապահության և հոգևոր ոլորտում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի և նշանակության կարևորում,

զ) պետական լրատվամիջոցներով և պետության կողմից իրականացվող միջոցառումների ժամանակ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության, դավանաբանության քարոզչության և ուսուցման գերակայության ապահովում,

է) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, զինծառայողների հոգևոր կյանքում և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, ինչպես նաև քննչական մեկուսարաններում, ազատազրկման վայրերում, կալանավորների և դատապարտյալների շրջանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեության հետագա ընդարձակում,

2. Կողմերը համաձայնեցին՝

- Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև կնքվելիք համաձայնագրի նախագիծը նախապատրաստելու համար նախանշված ուղղություններով երկուստեք ստեղծել աշխատանքային խմբեր,
- Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև կնքվելիք համաձայնագրի նախագծի վերջնական տարբերակը ստորագրման նախապատրաստել իննամսյա ժամկետում։

3. Սույն հուշագիրը ստորագրված է Մայր Աթոռ Էջմիածնում 2000թ. մարտի 17-ին, երկու բնօրինակից։

ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Շ. Կարամանուկյան	Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ եպիսկոպոս՝ Կճոյան
ՀՀ վարչապետի խորհրդական, ՀՀ	Երևանի պետական համալսարանի

կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար
Լ. Մկրտչյան

աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տեր Շահե արքեպիսկոպոս Աճեմյան